

# ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

## ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Վճարահաշվարկային կազմակերպությունների (այսուհետ՝ ՎՀԿ) լիցենզավորումը, ինչպես նաև վերջիններիս գործունեությունը կարգավորվում է [«Վճարահաշվարկային համակարգերի և Վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով](#) (այսուհետ՝ Օրենք), ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված [Կանոնակարգ 17/01-ով](#), [Կանոնակարգ 17/02-ով](#) և [Կանոնակարգ 17/03-ով](#), ինչպես նաև [Օրենքի](#) 2-րդ հոդվածում նշված այլ իրավական ակտերով:

## ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎՀԿ-ն Օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու լիցենզիա ստացած իրավաբանական անձն է:

ՎՀԿ-ների լիցենզիաների տեսակներն են՝

- դրամական (փողային) փոխանցումների իրականացումը.
- վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացումը:

**ՎՀԿ-ը թվարկված լիցենզիաները կարող է ստանալ ինչպես առանձին, այնպես էլ միաժամանակ:**

Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների տեսակներն ու մատուցվող ծառայությունները կարգավորվում են [Օրենքի](#) 19-րդ հոդվածով:

**Էլեկտրոնային փողի թողարկման թույլտվություն ստանալու համար** ՎՀԿ-ը պետք է ունենա դրամական փոխանցումների լիցենզիա: Էլեկտրոնային փողի թողարկման թույլտվությունը կարգավորվում է [Կանոնակարգ 16/1-ով](#) և [Կանոնակարգ 16/2-ով](#):

## ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՎՀԿ-ն վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու լիցենզիա ստանալու համար նախ պետք է որպես իրավաբանական անձ պետական գրանցում ստանա ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում, որից հետո արդեն գրանցված իրավաբանական անձը կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ վճարահաշվարկային ծառայությունների մատուցման լիցենզիա ստանալու համար:

Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզավորման համար իրավաբանական անձը Կենտրոնական բանկ է ներկայացնում լիցենզիայի հայտ և համապատասխան փաստաթղթեր՝

- Հիմնադրման փաստաթղթեր,
- տվյալներ ղեկավարների և մասնակիցների վերաբերյալ
- տնտեսական ծրագիր և աշխատանքի կանոնակարգ
- դրամական միջոցների և ընդհանուր կապիտալի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր
- և այլն (ամբողջական ցանկը սահմանված է [Օրենքի](#) 20-րդ հոդվածով և [Կանոնակարգ 17/01-ի](#) 3-րդ գլխով):

ՎՀԿ-ների լիցենզիա ստանալու հայտը և պահանջվող մյուս փաստաթղթերը ներկայացվում են իրավասու մարմնի կողմից ստորագրված միջնորդագրին (դիմումին) կից [Էլեկտրոնային կրիչով](#), [Կանոնակարգ 17/01-ով](#) սահմանված ձևաչափով:

Կենտրոնական բանկը սահմանված փաստաթղթերն ու տեղեկությունները ստանալու պահից երկամսյա ժամկետում լիցենզավորում է ՎՀԿ-ը կամ մերժում է դրա լիցենզավորումը՝ համապատասխան որոշումը տրամադրելով հայտատուին:

Կենտրոնական բանկը կարող է մերժել վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիա ստանալու հայտը [Օրենքի](#) 20.1 հոդվածով:

## ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

ՎՀԿ-ների համար սահմանվում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի տնտեսական նորմատիվ՝ 100 միլիոն ՀՀ դրամի չափով:

Վճարահաշվարկային կազմակերպության 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցը չի կարող ունենալ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն:

### **ՂԵԿԱՎԱՐՆԵՐ**

Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարներ են համարվում վճարահաշվարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը, նրա տեղակալը, գլխավոր հաշվապահը, որոնց նկատմամբ պահանջները սահմանված են [Օրենքի](#) 22-րդ հոդվածով:

### **ՏԱՐԱԾՔ**

Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության գործունեության համար օգտագործվող տարածքը և դրա տեխնիկական հագեցվածությունը պետք է համապատասխանեն [Կանոնակարգ 17/01](#)-ի 4-րդ գլխով սահմանված պահանջներին:

### **ՏԵԽՆԻԿԱ-ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

ՎՀԿ-ն իր ընթացիկ գործառնությունները ապահովելու համար պետք է ունենա [Կանոնակարգ 17/01](#)-ի 5-րդ գլխով սահմանված պահանջներին համապատասխան տեխնիկա-ծրագրային ապահովում:

### **ՏՈՒՐՔ**

ՎՀԿ-ը լիցենզավորման համար պետք է վճարի «[Պետական տուրքի մասին](#)» [ՀՀ օրենքի](#) 19-րդ հոդվածով սահմանված տուրք, յուրաքանչյուր տարվա համար հետևյալ դրույքաչափով՝

- ✓ Դրամական (փողային) փոխանցումներ իրականացման համար – 1 000 000 ՀՀ դրամ,
- ✓ Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության յուրաքանչյուր մասնաճյուղի համար 50 000 ՀՀ դրամ,
- ✓ վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացման համար 1 000 000 ՀՀ դրամ:

Էլ. փողի թողարկման համար առանձին տուրք սահմանված չէ:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Հետևյալ նյութը համարվում է ՎՀԿ-ների գործունեությունը կարգավորող իրավական ակտերում սահմանված պահանջների համառոտ նկարագրություն, ուստի առավել մանրամասն տեղեկություններին ծանոթանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել գործող իրավական ակտերն ամբողջությամբ: Նշենք, որ անհրաժեշտության դեպքում ԿԲ կողմից կարող է պահանջվել լրացուցիչ տեղեկություններ և դրանք հիմնավորող փաստաթղթեր: